ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Նյութերն ընդունվում են համապատասխան բուհերի ամբիոնների, գիտահետազոտական հիմնարկների բաժինների երաշխավորության կամ մասնագետի կարծիքի առկայության դեպքում: Հոդվածները պետք է վերաբերվեն իրավագիտության ոլորտին, իսկ առանձին դեպքերում հանդիսանան գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններ: Նյութին կից անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի վերնագիրը, համառոտագիրը՝ առնվազն 60 բառի սահմաններում, հեղինակի տվյալները և բանալի բառեր (առնվազն 5 բառ) ՝ անգլերեն և ռուսերեն: Նյութերի ծավալը որոշելիս՝ խնդրում ենք հիմք ընդունել հետևյալ պահանջները՝ տեքստը տպագրվում է սովորական A4 չափի թղթի վրա՝ 1,5 տողաչափով, հիմնական տեքստի տառերի չափը՝ 12, տողատակերի տառերի չափը՝ 10, լուսացքները՝ ձախից, վերևից, աջից և ներքևից՝ 2 սմ, Unicode տառատեսակով՝ «Arial Unicode», ռուսերեն և անգլերեն տեքստերը՝ Times New Roman տառատեսակով: Նորմատիվ ակտեր օգտագործելիս՝ տեքստում պետք է նշել դրա տեսակը, ընդունման ժամանակահատվածը, անվանումը: Տեքստում կարելի է նշել ակտի տեսակը, ամսաթիվը և առանց չակերտների կրճատ անվանումը, որը կտա ճիշտ պատկերացում փաստաթղթի մասին:

Նյութի առաջին էջում՝ վերնագրից հետո, նշվում են տեղեկություններ հեղինակի մասին, որոնք կարտացոլվեն մեր պարբերականում՝ հեղինակի անուն և ազգանունը ամբողջությամբ, պաշտոնը և աշխատանքի վայրը, առկայության դեպքում՝ գիտական աստիճանը և կոչումը: Գիտական հոդվածները կարող են ներկայացվել, որպես կանոն, առավելագույնը 15 էջի սահմաններում: